մեծ մաս մ՚ալ անցան դէպ ի Իբերիա (Սպանիա)։

ԻԲԵՐԱՑԻՔ

Քրիստոսէ իբր 1200 տարի առաջ՝ անծանօթ սերունդէ ազգ մը՝ Իբերացիք կոչուած[1], Ալպեան լեռներէն մտան Իտալիա. տակաւ առ տակաւ տէր դարձան Ադրիականի արեւելեան ամբողջ զառ ի թափին։ Յառաջացան մինչեւ իսկ հարաւային Իտալիա եւ Սիկիլիա, ուր Պեղասգեանց մէկ մասը հալածելով դէպ ի Ապենինեանց արեւմտեան զառ ի թափը, միւս մասն ենթարկեցին իրենց լուծին։ Թէեւ Ապենինեան լեռներն այս երկու ցեղերուն սահմանագլուխներն եղան, սակայն Իբերացիք անցան այդ լեռներէն ու տարածուեցան Ետրուրիա եւ Կամպանիա։ Իտալիոյ մեծագոյն մասին մէջ այս երկու ցեղերն իրարու հետ ձուլուելով, մեծ ժողովուրդ մը կազմեցին։

Շար. Հ. Ս. ՏԷՐ-ՄՈՎՍԷՍԵԱՆ

1. Հազար ու մէկ ենթադրութիւն եղած է Իբերացւոց ծագման մասին, որոնցմէ եւ ո՛չ մէկը կրցած է լուծել առեղծուածը։ Ոմանք կը կարծեն թէ Կովկասէն եկած ըլլան, ուրիշներ կ՚ենթադրեն որ Ափրիկէէն գաղթած են Եւրոպա։ Յաջորդաբար համարեցան՝ թէ Իբերացիք արիական, սեմական եւ տիւրենեան ծագումէ են։ Փորձեր եղան զանոնք նոյնացնել կեղտերու հետ։ Արդի գիտնականներէն ոմանք, նկատի առնելով Իբերացւոց դիրքը ծայրագոյն Արեւմուտքի մէջ, աշխատեցան ապացուցանել թէ՝ Ամերիկացիներէ սերած են անոնք, գաղթած Եւրոպա տառապելական շրջանին միջոց, երբ դեռ Ատլանտեան երկիրը (հիմայ ծով) իրարու կը կապէր երկու ցամաքները։

ՀԱՅՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Բարձրեա՜լ Աստուած. անհրպելի բարձունքներուդ քով հասնի,
Իմ եղկելի կոտրած քնարիս աղէխորով թրթռումներ։

Տե՛ս ինչ եղաւ քու ցանկալի Եդեմային բուրաստանդ.
Լռէ՛ սիրով՝ հազարաւոր անմեղներու գոչիւնին։

Խաղողներու կըթուելուն պէս, թշնամիք զմեզ քաղեցին,
Հընձաններու մէջ նետուեցանք, մեր արեամբ տալ քեզ գինի։

Տե՛ս սա բաժակն, դեռ կը մըխայ. հայուն արիւնն նո՛ր քամուած՝
Ըլլա՛յ շոգի, ըլլա՛յ թող ամպ, բերէ պարարտ անձրեւներ։

Ծընծղկիկնե՛րն իսկ հագուեցան իրենց ջերմին փետուրներն,
Մինչդեռ աւա՜ղ, մենք ցուրտերէն կը կափկափենք յարատեւ։

Գթա՛, ով մեծ Տէր Եհովա՛, նուիրական քու հօտիդ,
Եւ օրհնէնքի բիւր ջըրվէժներ՝ վայրահոսին գոգերէդ։

Ա՜խ, երբ պիտի, Ամենակա՜լ, Քու բազուկդ զօրաւոր
Պիտի կանգնէ զմեզ այս դիրքէն, ու ջըլատիչ անկումէն։

Այլ մեր սրտէն, մեր աչքերէն՝ քամուեցան դառն արցունքներ,
Ցամքեցաւ սիրտն, թառամեցան մեր զգացումներ յուսալից։

Այս ծերութեանս օրերուն մէջ, միակ իմ յոյսըս դուն ես,
Արդարութիւնդ յաղթանակէ՛ թշնամւոյն վատ գործերուն։

Լոզան. – Դեկտ. 1916 ԺԻՐԱՅՐ

digitised by A.R.A.R.@